

St. Mesrob Armenian Apostolic Church

4605 Erie Street, Racine, Wisconsin 53402

414-639-0531



Ս. ՄԵՍՐՈՊ ԶԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Reverend Father Garabed Kochakian, Pastor

Տ. Կարապետ Բահանայ Բոչաքեան - Հովիւ

2 Փետրուար 1983

28096

Գեղաշնորհ  
Տ Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Այսու կուզանք յայտնել Ձերդ Սրբազանութեան թէ եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը գումարուեցաւ Կիրակի Յունուար 23, 1983 Սուրբ Պատարագի մատուցման ետք 65 անդամներու ներկայութեան: Բու՛նջարկութեամբ 65 տրատու անդամներ մասնակցեցան: Եկեղեցւոյս անդամներուն թիւն է 249:

Օրինաւոր կերպով կատարուեցաւ ընտրութիւնը Մխական Խորհուրդին, Ընտրողական Յանձնախումբին եւ Հաշուեքննիչ Յանձնախումբին: Մխական Խորհուրդի նորընտիր անդամներ են Տիարք Թօտ Միքէլեան, Թոմըս ձանիքեան, Կարապետ Հարտի եւ ձօրճ Սահակեան:

*Կ. Կարապետ*

Համաձայն Ձերդ Սրբազանութեան Դեկտեմբեր 1, 1982 նամակին, ներիակ կը գտնէք եկեղեցւոյս տարեկան տեղեկագիրներու պրակը ինչպէս նաեւ ծխական ժողովի ընտրութեանց արդիւնքը, ընտրութեանց քուէարկութէն օրինակ մը թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով, թեմական պատգամաւորներու անուններ, հասցէներ եւ հեռաձայնի թիւերը, եկեղեցական կազմակերպութեանց վարջական մարմիններու ատենապետներու անունները, հասցէներ եւ հեռաձայնի թիւերը, Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրը անհրաժեշտ ստորագրութիւններով, ծխական ժողովի ատենագրութիւնը, ծխական ժողովի ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը եւ անդամներուն ղրկուած հրաւիրագրէն ու օրակարգէն օրինակ մը:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ բարձր նկատողութեան կը սպասենք ծխական խորհուրդի ընտրութեանց վաւերացման:

Մնամք Խորհուրդաբար աղօթակից  
ի դիմաց ծխական ժողովի

*Տ. Կարապետ Բահանայ Բոչաքեան*

Տ Կարապետ Բահանայ Բոչաքեան  
Նախագահ

